

Հրապարակման ամսաթիվը «17» «05» 2022թ  
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,  
մանրամասների համար՝  
Հեռախոս - (37410) 8686, +374 (10) 51-09-10 (9105) - Բանկի տեղեկատու



**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ  
ՎՃԱՐԱՅԻՆ ԶԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԶԱՐՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ**

**ԵՐԵՎԱՆ 2022**

**Բանկի անվանումը** - «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**Հասցե** - Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1

**Էլեկտրոնային հասցե** - bank@aeb.am

**Կայք** - www.aeb.am

**Հեռախոս** - (37410) 8686, +374(10)51-09-10 (9105)

**Ֆաքս** - (37410) 53-89-04

I. Սույն ամփոփագիրը կարգավորում է Բանկի կողմից թողարկվող վճարային քարտերի տրամադրման և սպասարկման պայմանները:

**II. Վճարային քարտ**՝ Բանկի սեփականությունը հանդիսացող մագնիսական, չիպային, հիբրիդ (համատեղված) կամ թվայնացված (թոքենացված) բանկային քարտն է, որը վճարահաշվարկային համակարգերի կանոններին համապատասխան իր գործողության ժամկետում քարտապանին հնարավորություն է տրամադրում իր քարտային հաշվից կատարել փոխանցումներ, անկանխիկ վճարումներ, ստանալ կանխիկ միջոցներ կամ մուտքագրել գումարներ քարտային հաշվին:

**Լրացուցիչ քարտ**՝ նույն հաճախորդին տրամադրվող գործող քարտային հաշվին կցված նույն/այլ վճարային համակարգի և տեսակի քարտ:

**Յցված քարտ**՝ հաճախորդի կողմից նշված անձին տրամադրվող գործող քարտային հաշվին կցված քարտ:

**III.** Վճարային քարտի թողարկում՝ Քարտը թողարկվում է Հաճախորդի կողմից Բանկի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու դեպքում և տրամադրվում է Հաճախորդին առավելագույնը 5 բանկային օրում: Քարտն ակտիվանում է մեկ բանկային օրվա ընթացքում, եթե քարտը տրամադրվում է առանց PIN կոդի, ապա PIN կոդի ակտիվացման մեկնագամյա գաղտագիրը տրամադրվում է հաճախորդին SMS հաղորդագրության միջոցով, որը քարտապանը մուտքագրելով բանկումատի համապատասխան դաշտում միաբժամանակ ակտիվացնում է քարտը և ընտրում նոր PIN կոդ

**IV. Բանկը թողարկում է ինչպես դեբետային, այնպես էլ հաշվարկային վճարային քարտեր, մասնավորապես.**

ա) Դեբետային - ArCa Սոցիալական

բ) Հաշվարկային - ArCa CLASSIC, ArCa CLASSIC MIR, ArCa BUSINESS, MASTERCARD GOLD, MASTERCARD STANDART, MasterCard ARMEC'S GOLD, MasterCard ARMEC'S STANDARD, VISA INFINITE, VISA PLATINUM, VISA GOLD, VISA BUSINESS, VISA CLASSIC, ընդ որում Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվում են միայն ArCa BUSINESS կամ VISA BUSINESS տեսակի քարտերը:

**V.** Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով կատարվող Գործարքները հաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ համապատասխան արժույթի առիթ/վաճառքի համար Բանկի կողմից սահմանված փոխարժեքներով, որի արդյունքում առաջացած գործարքի գումարների տարբերությունների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

**VI. Բանկի պարտավորությունները և իրավունքները**

*Բանկը պարտավոր է՝*

- Ապահովել Քարտի սպասարկումը՝ համապատասխան վճարահաշվարկային համակարգերի կողմից տվյալ տեսակի քարտերի համար ընդունված կանոնների
- Պայմաններով սահմանված կարգով և դեպքերում տրամադրվել հաճախորդին հաշվի քաղվածքներ:
- Քարտի կորստի կամ հափշտակման վերաբերյալ հաճախորդից ահազանգ ստանալուն պես կատարել Քարտի բլոկավորում:
- ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով սահմանված կարգով պահպանել հաճախորդի վերաբերյալ իրեն հայտնի դարձած բանկային գաղտնիք կազմող

## Բանկն իրավունք ունի՝

- Մերժել Քարտով գործարքներին իրականացումը, եթե պահանջվող գումարը գերազանցում է Քարտի Վճարային սահմանաչափը:

- Հաշվի դրամական միջոցների նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կիրառել սահմանափակումներ դատական, հարկադիր կատարման և հարկային մարմինների որոշումների հիման վրա:

- Սնակցեպտ կարգով Քարտի հաշվից գանձել Սակագներով սահմանված վճարները, հաշվանցել Բանկի նկատմամբ հաճախորդի ունեցած դեբիտորական, վարկային և դրական այլ պարտավորությունները:

## VII. Հաճախորդի պարտավորությունները և իրավունքները

### Հաճախորդը պարտավոր է՝

- Վճարել Բանկին Քարտի և քարտային հաշվի սպասարկման հետ կապված Սակագներով սահմանված բոլոր վճարները:

- Քարտի գործողության դադարեցման դեպքում այն 5 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել Բանկին: Քարտային հաշվի փակման դիմում ներկայացնելու դեպքում քարտը չվերադարձնելիս Հաճախորդը կրում է տվյալ քարտի կիրառմամբ կատարված գործառնությունների ողջ ռիսկը, ինչպես նաև պարտավոր է

- փոխհատուցել քարտը միջազգային STOP LIST մուտքագրելու համար Բանկի Սակագներով սահմանված վճարները:

- Քարտի կորստի և/կամ PIN-կոդի այլ անձանց հասանելի դառնալու կամ նման կասկած ունենալու դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել Բանկին՝ քարտի բռնկվորման համար:

- Գործարքների իրականացման ժամանակ սպասարկող աշխատակցի պահանջով ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ:

- Երրորդ անձանց չփոխանցել քարտը կամ կից քարտերը և PIN-կոդը:

- Երեք աշխատանքային օրվա ընթացքում Բանկին տեղեկացնել անձը հաստատող փաստաթղթի, հեռախոսահամարի, աշխատանքի, բնակության վայրի և նախկինում տրամադրված այլ տեղեկությունների, փաստաթղթերի փոփոխությունների մասին:

- Քարտի համար հատուկ (արտոնյալ) սակագներ նախատեսված լինելու դեպքում (այն քարտերը, որոնք թողարկվում և սպասարկվում են Բանկի հետ համագործակցող կազմակերպության միջոցով աշխատավարձ, կրթաթոշակ կամ այլ տեսակի վճարումներ իրականացվելու նպատակով) վճարել Բանկի և համագործակցող կազմակերպության միջև համաձայնեցված հատուկ (արտոնյալ) սակագները, եթե նրանց միջև այլ համաձայնություն առկա չէ, իսկ այդ կազմակերպության հետ Բանկի համագործակցությունը դադարելու կամ հաճախորդի համագործակցող կազմակերպությունից քարտով վճարումներ ստանալը դադարելու դեպքերում՝ հատուկ սակագները դադարում են և Հաճախորդը պարտավոր է վճարել համաձայն Սակագների:

### Հաճախորդն իրավունք ունի՝

- Վճարային սահմանաչափի սահմաններում իր Քարտային հաշվից ստանալ կանխիկ միջոցներ բանկումատներից և կանխիկի տրամադրման կետերից, կատարել

- անկանխիկ վճարումներ կամ Բանկի կողմից առաջարկվող այլ գործառնություններ:

- Մտանալ մեկից ավելի քարտեր, կից քարտեր ներկայացնելով Բանկին դիմում և վճարելով Սակագներով սահմանված վճարները:

- Պատվիրել և ստանալ նոր քարտ/կից քարտեր՝ ժամկետները լրացած, վնասված, կորած քարտերի փոխարեն:

- Իր քարտային հաշվին գումարներ մուտքագրել ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:

- Մտանալ հաշվի քաղվածքներ Պայմաններով սահմանված կարգով, դեպքերում և պարբերականությամբ:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՐՈՂԻՎՅՑԻՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽՆԸՆԳՄՈՒ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՍԱՅԻՆ ԿՄՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԿՄՍ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿՍԱԿՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՄԱՆՎՈՐ Է 24/7 ՈՒՇԻՄՈՎ, ՁԵՐՈՒ Է ԹՂՔԱՅԻՆ ՏԵՂԵԿՍԱԿՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՄՏԻ ՈՒՄԿՒՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՐՆՎՈՒԹՅՈՒՆ:

- Մտանալ քարտային հաշվով կատարված յուրաքանչյուր գործառնության վերաբերյալ (SMS) կարճ հաղորդագրություն՝ այդ ծառայությունից օգտվելու դեպքում:

- Բողոքարկել քարտային հաշվով կատարված գործարքները

[Պայմաններով](#) սահմանված կարգով և ժամկետներում

## VIII. Պատասխանատվությունը

- Հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները Բանկի կողմից ՀՀ օրենսդրության խախտմամբ հրապարակելու համար Բանկը կրում է

- պատասխանատվություն Հաճախորդի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:

- Հաճախորդի քարտային հաշվի միջոցները առանց վերջինիս կարգադրությամբ էլքազրվելու հետևանքով նրան պատճառված վնասների համար Բանկը

- պատասխանատվություն չի կրում, եթե այդ միջոցները դուրս են գրվել նույնականացված Հաճախորդի կամ նրա ներկայացուցչի կողմից կամ Հաճախորդի

- Հաճախորդի քարտային հաշվի միջոցները առանց վերջինիս կարգադրության ելքազրվելու հետևանքով նրան պատճառված վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում, եթե այդ միջոցները դուրս են գրվել Հաճախորդի դիտավորության կամ անգզուշության, խաբեության կամ այլ ցանկացած ձևով կատարվող զեղծարարության արդյունքում Հաճախորդի նույնականացման տվյալի երրորդ անձանց հայտնի դառնալու և օգտագործվելու հետևանքով:

- Քարտի կորստի կամ գողության արդյունքում երրորդ անձանց կողմից հաշվից կատարվող ելքերի համար Բանկը պատասխանատվություն չի կրում, բացառությամբ, եթե Քարտի կորստի կամ գողության մասին Բանկի տեղեկացվելուց հետո հաշիվը չբռնկվորելու արդյունքում Դրական միջոցները դուրս են եկել հաշվից:

## IX. Քարտի բռնկվորման, ապաբռնկվորման պայմաններն ու ժամկետները

- Քարտը Բանկը բռնկվորում է հաճախորդի կողմից քարտի/Պին կոդի/ կորստի կամ գողանալու մասին տեղեկացվելու դեպքում և քարտով կատարված այն գործարքները հայտնաբերելուց հետո, որոնք Քարտապանի կողմից չեն կատարվել:

- Քարտը Բանկը բռնկվորում է նաև Բանկի նկատմամբ Հաճախորդի պարտավորությունների չկատարման, Հաշվի նկատմամբ ՀՀ օրենսդրության և Պայմանների համաձայն սահմանափակումներ կիրառվելու դեպքերում:

- Քարտը Բանկը ապաբռնկվորում է բռնկվորման հիմքերը վերանայուց հետո, Հաճախորդի կողմից ապաբռնկվորման համար Բանկին դիմելուց և Սակագներով ապաբռնկվորման համար սահմանված վճարները կատարելուց մեկ բանկային օրվա ընթացքում:

- Բանկի կողմից քարտը կարող է բռնկվորվել այն դեպքում, երբ քարտով կատարվել են կասկածելի գործարքներ և չի հաջողվում կապ հաստատել հաճախորդի հետ:

- Այն դեպքում, երբ քարտով, համաձայն վճարահաշվարկային կազմակերպությունների կանոնների կատարվում են ստորին սահմանաչափերով գործարքներ և հնարավորություն չի լինում կապ հաստատել հաճախորդի հետ Բանկի աշխատակիցները ստանում են իրավասություն նշված քարտերը միջազգային STOP LIST մուտքագրելու և Բանկի սակագներով և դրույքաչափերով սահմանված միջոդրավճարները հաճախորդի տվյալ քարտի հաշվից կամ այլ հաշիվներից գանձելու համար:

- Եթե վճարային քարտին առկա է չվճարված երեք ամիս և ավելի տևողությամբ տարեկան սպասարկման վարձ/և/կամ դեբիտորական պարտք, Բանկն իրավասու է առանց հաճախորդին տեղեկացնելու փակել քարտը /բռնկվորել/, որից հետո այն կարող է վերաբացվել /ապաբռնկվորում/ միայն վերոնշյալ պարտքերը մարվելուց հետո:

- Բանկը կարող է մերժել քարտի ապաբռնկվորումը, եթե քարտի բռնկվորումն արդյունք է օրենքով սահմանված կարգով քարտի կամ քարտային հաշվի վրա դրված սահմանափակումների, վճարված չէ քարտի ապաբռնկվորման համար սահմանված վարձավճարը կամ քարտի ապաբռնկվորումը կարող է հանգեցնել ֆինանսական կորուստների, որոնք չեն կարող ծածկվել տվյալ քարտային հաշվին առկա միջոցներով:

## X. Հաճախորդի կողմից քարտային գործառնության բողոքարկման կարգն ու ժամկետները:

- Հաճախորդը կարող է բողոքարկել Քարտային հաշվով կատարված գործարքները կամ կոնկրետ գործարքը Բանկին ներկայացնելով դիմում կամ Բանկի սահմանած

- ձևող բողոք/այսուհետ՝ Բողոք/:

- Հաճախորդի կողմից ներկայացված բողոքը ընդունելուց Հաճախորդին տրամադրվում է հավաստում՝ ստացական կամ բողոքը պատճենը՝ բողոքը ստանալու մասին Բանկի աշխատակցի ստորագրությամբ:

- Բանկի կողմից բողոքը քննարկվում և պատասխանը տրամադրվում է Բողոքը Բանկում ստացվելուց 10 աշխատանքային օրվա ընթացքում:

- Եթե Հաճախորդը բողոքը ներկայացնում է /քաղվածքի ստանալուց/բողոքարկվող գործարքի մասին տեղեկանալուց 15 օրվա ընթացքում, ապա Բանկը Հաճախորդի բողոքը ստանալուց մինչև 90 օրվա ընթացքում կարող է բավարարել Հաճախորդի բողոքը եթե առկա են ապացույցներ, որ գործարքը կատարվել է առանց Հաճախորդի նույնականացման կամ նույնականացման տվյալի կիրառման, դրանում առկա չէ Հաճախորդի մեղքը, այդ թվում գործարքը չի կատարվել Հաճախորդի դիտավորության

## XI. Քարտի վերաթողարկման կարգն ու պայմանները, ժամկետները

- Քարտի գործողության ժամկետի ավարտին նախորդող 15 օրվա ընթացքում Բանկն առանց հաճախորդի լրացուցիչ դիմումի վերաթողարկում է քարտը, բացառությամբ եթե.

- Հաճախորդի հետ հնարավոր չի եղել մինչ այդ կապ հաստատել.

- Հաճախորդը հրաժարվել է քարտը վերաթողարկելու Բանկի առաջարկից,

- Հաճախորդը մինչ այդ (քարտի գործողության ժամկետի ավարտից նվազագույնը 30 օր առաջ) դիմել է Բանկին հաշիվը փակելու (քարտը չվերաթողարկելու) համար,

- Հաշվով քարտի գործողության ժամկետի ավարտման ամսին նախորդող 365 օրվա ընթացքում որևէ գործարք չի կատարվել և հաշվի մնացորդը 50.000 դրից կամ համարժեք արտարժույթից պակաս է,
- Հաճախորդը Բանկի նկատմամբ ունի չկատարված պարտավորություններ:

## **XII. Քարտի անվտանգության կանոնները**

- Եթե Քարտի պարտադիր վավերապայմանները նախատեսում են քարտի համապատասխան մասում Հաճախորդի ստորագրության պարտադիր առկայություն, ապա հաճախորդը պարտավոր է քարտը ստանալուց ղնել իր ստորագրությունը քարտի հակառակ կողմի ստորագրության դաշտում:
- Քարտը պետք է պահպանել խոնավությունից հեռու, սենյակային ջերմաստիճանի պայմաններում, կանխելով քարտի մեխանիկական, ճկելու կամ այլ ձևով վնասելու գործողություններից:
- Քարտը պետք է պահպանել անհասանելի երրորդ անձանց համար, վճարումներ կատարելու նպատակով չթողնել երրորդ անձանց մոտ կամ հանձնել երրորդ անձանց տիրապետմանը:
- Քարտի PIN կոդը պետք է պահպանել գաղտնի և չհայտնել երրորդ անձանց կամ թույլ տալ, որ այն հասանելի դառնա երրորդ անձանց, չդնել այն դրապանակում կամ պահել դրանում թղթային եղանակով, քանի որ այն պետք է հայտնի լինի միայն անձամբ հաճախորդին:
- Քարտի PIN Օրարի մեջ առկա ծածկագիրը մտապահելուց հետո խորհուրդ է տրվում ոչնչացնել երրորդ անձանց հասանելի չդառնալու համար:
- PIN-ը 3 անգամ սխալ մուտքագրելու դեպքում քարտն ավտոմատ կերպով բլոկավորվում է: Քարտը կարող է առգրավվել և հնարավոր չլինի օգտվել հաշվից մինչև հաճախորդի կողմից Բանկին գրավոր դիմելը և վերջինիս կողմից քարտի ապարկավորումը:
- Քարտի կորստի, գողության դեպքում հաճախորդը պետք է անհապաղ տեղեկացնի այդ մասին Բանկին հեռախոսազանգով(+37410530761, +37410510929 կամ +37496012816), որի հիման վրա Բանկը հաշվի Դրական միջոցների պահպանությունը ապահովում է նպատակով հաշիվը բլոկավորում է, իսկ ապարկավորումը կատարվում է Հահաճախորդի դիմումի հիման վրա:
- Քարտի գողության դեպքում խորհուրդ է տրվում Հաճախորդին դիմել նաև իրավապահ մարմիններին և դիմելու ապացույցը ներկայացնել Բանկին՝ իրավապահ մարմինների պահանջով քարտի ապօրինի օգտագործման փորձերի մասին տեղեկատվություն վերջիններիս տրամադրելու համար:
- Հաճախորդը պետք է Քարտի ծածկագիրը բանկումատ մուտքագրելիս թույլ չտա, որ շրջակայքում երրորդ անձանց ներկայության կամ տեսախցիկների առկայության դեպքում ծածկագիրը հասանելի դառնա երրորդ անձանց, երեկոյան ժամերին խորհուրդ է տրվում օգտվել լուսավոր շրջակայքում առկա բանկումատներից՝ գողություններից ու հափշտակություններից խուսափելու համար: Հաճախորդը չպետք է թույլ տա, որ իր փոխարեն երրորդ անձինք իրականացնեն գործարքներ և/կամ հավաքեն PIN-ը:
- Հաճախորդը պետք է ուշադիր լինի և չմոռանա բանկումատից վերցնել տրամադրող գումարները և քարտը, քարտը չվերցնելու դեպքում կարող է հնչել ազդանշան, որից մի քանի վայրկյան անց քարտը կարող է կլանվել բանկումատի կողմից:
- Քարտի առգրավման դեպքում՝ այն ստանալու համար հաճախորդը պետք է դիմի Բանկին: Բանկը վճարային քարտը տրամադրում է հաճախորդին մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում:

- Հաճախորդը պետք է ուշադիր լինի բանկումատի շրջակայքին, ստեղնաշարին, քարտ ընթերցող սարքերին և դրանց լրացուցիչ սարքեր, հաղորդակարեր, կաշուն ժապավեններ և այլ նմանատիպ կապակածելի միջոցներ միացված լինելու դեպքում՝ հրաժարվի գործարքներ կատարելուց և անհապաղ տեղեկացնի դրա մասին Բանկին:
- Քարտով գնումներ խորհուրդ է տրվում կատարել հայտնի և վստահելի առևտրի կետերից, գնումների կատարման համար չպետք է ուղարկել քարտի տվյալները (քարտի համարը, գործողության ժամկետը և այլն) էլ. փոստով երրորդ անձանց:
- Առևտրի կետերում Հաճախորդը քարտը պետք է ներկայացնել միայն գանձապահին և միայն այն դեպքում, երբ իսկապես պատրաստվում է գնում կատարել: Գործարքի իրականացման ժամանակ հաճախորդը չպետք է քարտը բաց թողնի իր տեսադաշտից և չպետք է թույլատրի գանձապահին կամ այլ աշխատակցի քարտը դուրս բերել սպասարկման տարածքից:
- Առևտրի և սպասարկման կետերում էլեկտրոնային տերմինալի միջոցով կատարվող սպասարկման ժամանակ տպվում է անդորրագրի 2 օրինակ, որոնցից մեկը հաճախորդը գանձապահի պահանջի դեպքում պետք է ստորագրի: Որոշ կետերում գործարքները կատարվում են մեխանիկական պատճենադաշտան միջոցով և անհրաժեշտ տվյալները ձեռագիր լրացվում են տվյալ կետի գանձապահի կողմից: Այս դեպքում փաստաթուղթը կազմվում է 3 օրինակից: Ստորագրելուց առաջ անհրաժեշտ է համոզվել, որ կատարված գնման, ստացված ծառայության կամ կանխիկի գումարի արժեքը համապատասխանում է չեկի վրա նշվածին: Երբեք չպետք է ստորագրել այն փաստաթղթի վրա, որի գումարային մասը լրացված չէ:
- Հաճախորդին խորհուրդ է տրվում վերցնել և պահպանել իր կատարած գործարքների անդորրագրերը:
- Համացանցով գնումների դեպքում չպետք է հավաքել, օգտագործել PIN-ը և պետք է պահպանել գնումների վերաբերյալ ձևաբովող տեղեկատվությունը: Վստահ լինելու համար, որ քարտի վերաբերյալ տեղեկատվությունը հաղորդվում է գաղտնագրված, անհրաժեշտ է համոզվել, որ առևտրի կետի համապատասխան էջի հասցեն (URL) սկսվում է https:// դասիչով: Միաժամանակ, էջադիտիչի եզրին պետք է հայտնվի փակ կողպեքի տեսքով նկար:
- Անհրաժեշտ է զգուշանալ էլեկտրոնային փոստով ստացվող այն հաղորդագրություններից, որոնք պարունակում են կցված ֆայլեր կամ անձանոթ Web էջի հասցեներ: Դրանց միջոցով հնարավոր է ստանալ համակարգչային վիրուսներ, այլ վնասակար ծրագրեր, վնասման կամ բացահայտման վտանգի ենթարկել կարևոր կամ գաղտնի տեղեկատվությունը:
- Համակարգչում անհրաժեշտ է տեղադրել հակավիրուսային և հակահակերային ծրագրեր, ժամանակին թարմացնել դրանց տվյալների շտեմարանները և պարտադիր կերպով իրականացնել համակարգչում առկա այլ ծրագրերի պարբերական թարմացումների տեղադրումը:
- Էլեկտրոնային փոստով չպետք է պատասխանել այնպիսի հարցումների, որոնք վերաբերվում են հաճախորդի անձնական տվյալներին: Եթե հետախոսով կամ կապի այլ միջոցներով պահանջում են հայտնել բանկային գաղտնաբառը (չփոթե՞լ PIN-ի հետ), անձնագրի համարը կամ այլ նմանատիպ տեղեկատվություն, ապա անհրաժեշտ է պատասխանել միայն հարցման օրինականության մեջ լիակատար վստահության ձևով բերելուց հետո:
- Անհրաժեշտ է զգուշանալ կեղծ, սակայն օրինական ընկերությունների Web էջերին կամ էլեկտրոնային փոստին նմանվող այնպիսի հասցեներից, որոնք իրականում կարող են առաջնորդել խաբեական հասցեով:
- Web էջը ճիշտ փակելու համար հաճախ բավարար չէ միայն փակել էջադիտիչի պատուհանը, այլ պետք է հետևել տվյալ էջը թողնելու համապատասխան հրահանգներին, այլապես մեկ այլ անձ կարող է հաճախորդից հետո այնտեղ մուտք գործելու հնարավորություն ունենալ:
- Անհրաժեշտ է խուսափել Internet ծառայություններ մատուցող ընդհանուր օգտագործման կետերում (Internet-սրճարաններ և այլն) ֆինանսական գործառնություններ կատարելուց: Դրանց մեջ կարող են տեղադրված լինել հատուկ ծրագրեր, որոնք կարող են գրանցել հաճախորդի բոլոր գործողությունները և բացահայտել այն տվյալները, որոնք կհավաքվեն համակարգչի ստեղնաշարի միջոցով:

- Ինտերնետային առևտրի կետերում քարտային գործառնությունների անվտանգության բարձրացման նպատակով գործում են ArCa 3-D Secure, MasterCard® SecureCode™ և Verified by Visa® (VbV) համակարգերը, որոնք ապահովում են նշված համակարգերին անդամակցած առևտրի կետերում ArCa, MasterCard և Visa քարտերով կատարվող գործառնությունների անվտանգության ժամանակակից մակարդակ՝ հիմնված SMS հաղորդագրությունների միջոցով հաճախորդին ուղարկվող մեկնագամայ գաղտնաբառերի վրա: Նշված համակարգերին անդամակցած առևտրի կետերում յուրաքանչյուր գործառնության դեպքում հաճախորդի պահանջով նրա բջջային հեռախոսին կուղարկվի մեկնագամայ գաղտնաբառ, որն անհրաժեշտ է անմիջապես մուտքագրել գործառնության հաստատման հատուկ դաշտում, այլապես գործառնությունը կմերժվի: Ընդ որում, հաճախորդը գաղտնաբառը չպետք է հայտնի այլ անձանց, իսկ բջջային հեռախոսահամարի բացակայության կամ Դրա փոփոխության դեպքում պետք է անձամբ, իսկ բացառիկ դեպքերում, Բանկի համաձայնությանը, նաև կապի այլ միջոցներով Բանկ ներկայացված գրավոր դիմումի հիման վրա այդ մասին տեղեկացնել Բանկին:
- Փակ տարածքում գտնվող բանկումատից օգտվելիս չպետք է թույլատրել անհայտ անձանց մուտքը: Նշված տարածքում գտնվող բանկումատ մուտքը թույլատրող քարտ-ընթերցող սարքերը չպետք է PIN-ի մուտքագրում պահանջեն: Նշված սարքում պատահաբար PIN մուտքագրելու դեպքում անհրաժեշտ է անմիջապես բլոկավորել քարտը և դիմել Բանկ:
- Քարտապանը պետք է պահանջի իր ներկայությամբ անմիջապես ոչնչացնել սխալ ձևակերպված կամ իր կողմից հրաժարված գործարքի վերաբերյալ փաստաթղթի վաճառողի օրինակը, իսկ հաճախորդի օրինակը վերցնի իր հետ: Դա թույլ կտա ավելի արագ ապաստանել հրաժարված գործարքի գծով հաճախորդի միջոցները, իսկ վաճառողի կողմից խաբեության դեպքում բողոքարկել գործառնությունը հնարավորինս կարճ ժամկետում:
- Քարտով վճարված ապրանքի վերադարձի դեպքում վաճառքի կետից պետք է պահանջել և պահպանել համապատասխան փաստաթուղթ, որը պետք է պարունակի չեղյալացված գործարքի տվյալները (քարտի համարը, նախնական գործառնության ամսաթիվը, հավաստագրման կոդը, վերադարձվող գումարը):

## **XIII. Քարտային հաշվի փակման կարգն ու պայմանները**

- Հաշիվը փակվում է հաճախորդի դիմումով ցանկացած ժամանակ:
- Հաշիվը Բանկի կողմից կարող է փակվել հետևյալ դեպքերում՝

- երբ հաճախորդի հաշվում պահվող դրական միջոցների գումարը պակաս է Սակագներով տվյալ հաշվի համար նախատեսված նվազագույն չափից, եթե նման գումարը չի վերականգնվել այդ մասին բանկի գրուշացման օրվանից մեկ ամսվա ընթացքում:

- մեկ տարվա ընթացքում տվյալ հաշվով գործառնությունների բացակայության դեպքում:

• Հաշվի փակման դեպքում՝ հաշվում եղած դրական միջոցների մնացորդը տրվում է հաճախորդին կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշիվ, հաճախորդի համապատասխան գրավոր դիմումն ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում:

**XIV.** Քարտային հաշիվներին առկա դրամական միջոցների համար հաշվարկվում է տարեկան տոկոսադրույք 0%, որի դեպքում Տարեկան տոկոսային եկամտաբերությունը՝ կազմում է 0% (տոկոսադրույքները հաշվարկվում են՝ տարին ընդունելով 365 օր):

Տոկոսադրույքները հաշվարկվում են տարին ընդունելով 365 օր, նահանջ տարին՝ 366 օր: Քարտային հաշվի դրական մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը հաշվարկվում է մինչև վճարային քարտի գործողության ժամկետի ավարտը: Քարտային հաշվի դրական մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը կիրառվում է, եթե վճարային քարտի միջին ամսական մեծությունը գերազանցում է 1.000.000 (մեկ միլիոն) դր

\*Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով՝ էլեկտրոնային բանաձևից՝

$$APY=(1+r/n)^n-1$$

որտեղ՝

APY – տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:

r – տարեկան պարզ տոկոսադրույքն է:

n – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

**ՈՒՇՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԶԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԼԿԱՏՄԱՍԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ԿՐԱՆ: ԻՄԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՄ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ԶԵՐ ԱՎԱՆԴ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐՆԵՔ ԱՎԱՆԴ ՏԵՍՔՈՎ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՎՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ՉՏԵՆ ԼԵՏԵՎՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՑՔՈՒՄ՝ [www.aeb.am](http://www.aeb.am)**

**XV.** Քարտային հաշիվների մնացորդների վրա տոկոսները կապիտալացվում են յուրաքանչյուր ամիս:

Տոկոսները հաշվեգրվում են քարտային հաշվում առկա գումարի մնացորդի, ինչպես նաև ավելացված գումարի մնացորդի և կապիտալացված տոկոսների վրա օրական կտրվածքով:

Բանկն իրավունք ունի փոփոխել քարտային հաշվում եղած դրական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ **XVI.** Պայմանագրից բխող վեճերի առաջացման դեպքում քարտատերը գրավոր դիմում է բանկին և 10 աշխատանքային օրվա ընթացքում քարտատիրոջը տրվում է դիմումի վերաբերյալ պատասխան: Պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում քարտատերն իրավունք ունի դիմել դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին օրենքով սահմանված կարգով:

**XVII.** Քարտերով հաշիվների բացման նվազագույն սկզբնական գումարի սահմանափակում չկա: Քարտային հաշիվների դիմաց վճարվող տոկոսները ենթակա են հարկման Եկամտային հարկի մասին ՀՀ օրենքով սահմանված չափով

**XVIII.** Հաճախորդը քարտային հաշիվ բացելու համար բանկ է ներկայացնում Հաշիվների բացման, սպասարկման և այլ ծառայությունների Տեղեկատվական Անփոփոխելի նախատեսված փաստաթղթերը:

**XIX.** Բանկն առնվազն երեսնորյա պարբերականությամբ քարտատիրոջը տրամադրում է իր քարտային հաշվի վերաբերյալ քաղվածք, բացառությամբ այն դեպքի, երբ հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հաշիվը չի դեբետագրվել կամ կրեդիտագրվել,

**XX.** Քարտի կորստի/կամ գողանալու դեպքում հաճախորդն անհապաղ տեղեկացնում է ArCa պրոցեսինգային կենտրոնին՝ 59-22-22 հեռախոսահամարով կամ բանկին՝ քարտը բլոկավորելու համար, այնուհետև դիմում բանկ՝ նոր քարտ ստանալու համար:

**XXI.** Հաճախորդի և բանկի միջև առաջացած վիճելի հարցերը բանակցության արդյունքում չկարգավորելու դեպքում հաճախորդը օրենքով սահմանված կարգով կարող է դիմել ֆինանսական համակարգի հաշտարարին կամ դատարան:

**XXII.** Հաշիվը և դրանում եղած դրական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում՝ դատարանի վճռի, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների հարկային կամ այլ մարմինների որոշումների (փաստաթղթային կամ էլեկտրոնային) հիման վրա հաշվի վրա արգելանք(կալանք) դնելուց կամ հաշվով գործառնությունները դադարեցնելուց:

**XXIII.** Առանց հաճախորդի կարգադրությամբ հաշվում եղած դրական միջոցները կարող են դուրս գրվել օրենքով սահմանված դեպքերում՝ դատարանի վճռի, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների որոշումների (փաստաթղթային կամ էլեկտրոնային) հիման վրա կամ Բանկի և հաճախորդի միջև պայմանագրով նախատեսված դեպքերում:

**XXIV.** Ավանդները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն.

• ՀՀ դրամով ավանդների դեպքում՝ մինչև 16.0 մլն դրամի չափով,

• արտարժույթային ավանդների դեպքում՝ մինչև 7.0 մլն դրամի չափով,

• ՀՀ դրամով և արտարժույթով ավանդների դեպքում, եթե դրամային ավանդը մեծ է 7.0 մլն դրամից, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 16.0 մլն դրամով,

• ՀՀ դրամով և արտարժույթով ավանդների դեպքում, եթե Դրամային ավանդը պակաս է 7.0 մլն Դրամից, ապա երաշխավորվում է Դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7.0 մլն Դրամի և հատուցված Դրամային ավանդի տարբերության չափով:

**XXV.** Բանկի բանկոմատների, Կանխիկի տրամադրման POS տերմինալների և Cash-In տերմինալների, Cash In/Out տերմինալ/փոխարկիչների և Cash-Out փոխարկիչների ցանկը ներկայացված է «Հավելված 1»-ում:

**Սակագներ և Դրույքաչափեր**

1.ArCa քարտեր	Արժույթ	CLASSIC <sup>2</sup>	CLASSIC MIR	BUSINESS	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ <sup>3</sup>	ՆՎԵՐ
1.1 Գործողության ժամկետ	AMD	5 տարի	3 տարի	5 տարի	5 տարի	մինչև Քարտի դիմերեսին նշված ամսվա վերջին օրը ներառյալ
	USD					
	EUR					
	RUR					
1.2 Քարտերի տրամադրում	AMD	0	0	0	0	3,000 դրամ
	USD					
	EUR					
	RUR					
1.3 Կցված, լրացուցիչ քարտերի տրամադրում	AMD	0	0	0	-	-
	USD					
	EUR					
	RUR					
1.4 Քարտային հաշվի բացում	AMD	0 <sup>4</sup>	0 <sup>4</sup>	0 <sup>5</sup>	0	0
	USD					
	EUR					
	RUR					

1.5 Քարտային հաշվի վարում	AMD	0	0	0	0	0
	USD	-			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-
1.6 Տարեկան սպասարկման վարձ	AMD	2,500 դրամ <sup>6</sup>	3,000 դրամ	8,000 դրամ <sup>27</sup>	0	0
	USD	-			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-
1.7 Կցված, լրացուցիչ քարտի տարեկան սպասարկման վարձ	AMD	2,500 դրամ	3,000 դրամ	8,000 դրամ <sup>27</sup>	-	-
	USD	-			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-
1.8 Կանխիկի տրամադրում «ՀԱՅԲԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ կանխիկացման կետերում (ATM, POS terminal)	AMD	0% <sup>7</sup>	0% <sup>7</sup>	0.50%	0% <sup>8</sup>	1%, min 1000 դրամ
	USD	3% min 1000 դրամ	3% min 1000 դրամ	3%, min 1000 դրամ	-	-
	EUR	-	2%, min 1000 դրամ	2%, min 1000 դրամ	-	-
	RUR	-	1%, min 1000 դրամ	1%, min 1000 դրամ	-	-
1.9 Կանխիկի մուտքագրում «ՀԱՅԲԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ բանկոմատներով (ATM CASH-IN)	AMD	1%	1%	1%	-	-
	USD	1%	1%	-	-	-
	EUR	-	1%	-	-	-
	RUR	-	1%	-	-	-
1.10 Կանխիկի տրամադրում «ՀԱՅԲԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ Դրամարկիդից	AMD	1%, min 1000 դրամ	1%, min 1000 դրամ	1%, min 1000 դրամ	0% <sup>8</sup>	1%, min 1000 դրամ
	USD	3%, min 1000 դրամ	3%, min 1000 դրամ	3%, min 1000 դրամ	-	-
	EUR	-	2%, min 1000 դրամ	2%, min 1000 դրամ	-	-
	RUR	-	Օրվա սահմանված տոկոսադրույքով	Օրվա սահմանված տոկոսադրույքով	-	-
1.11 ՀՀ այլ բանկերի կողմից թողարկված ArCa վճարային քարտերով «ՀԱՅԲԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ POS տերմինալներով կանխիկի տրամադրում	AMD	1%, min 1000 դրամ				
	USD	3%, min 1000 դրամ				
	EUR	2%, min 1000 դրամ				
	RUR	1%, min 1000 դրամ				
1.12 Կանխիկի տրամադրում ՀՀ այլ բանկերին պատկանող կանխիկացման կետերում (ATM, POS terminal) <sup>9</sup>	AMD	1%	1%	1%	0.5%	2%, min 1000 դրամ
	USD	3%	3%	3%	-	-
	EUR	-	2%	2%	-	-
	RUR	-	1%	1%	-	-
1.13 Կանխիկի մուտքագրում ՀՀ այլ բանկերին պատկանող կանխիկացման կետերում (ATM, POS terminal)	AMD	1%	1%	1%	-	-
	USD	-			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-
1.14 Անկանխիկ գործարքների կատարում քարտով	AMD	0%	0%	0%	0%	0%
	USD	0%			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-
1.15 Քարտի փոխարինում նորով, քարտի PIN կոդի վնասման և կորստի դեպքում, քարտի վաղաժամկետ վերաթողարկման դեպքում նոր քարտի տրամադրում	AMD	2,500 դրամ	3,000 դրամ	8,000 դրամ	700 դրամ <sup>10</sup>	-
	USD	-			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-
1.16 Հաշվից քաղվածքի տրամադրում						
ա) մինչև մեկ ամիս կատարված գործարքների համար <sup>11</sup>	AMD	0	0	0	0	0
	USD	-			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-
բ) 1-ից մինչև 3 ամիս կատարված գործարքների համար	AMD	0	0	1,500 դրամ	0	0
	USD	-			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-
գ) 3 ամսից մինչև մեկ տարի կատարված գործարքների համար	AMD	0	0	2,500 դրամ	0	0
	USD	-			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-
դ) մեկ տարուց ավել կատարված գործարքների համար	AMD	0	0	5,000 դրամ	-	-
	USD	0			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-
1.17 Քարտի «Stop-List»-ից հանում (բոլոր ArCa տեսակի և արժույթի քարտերի համար AEB Mobile հավելվածով բլոկավորված քարտի ապաբլոկավորում՝ անվճար)	AMD	1,000 դրամ*	1,000 դրամ*	1,000 դրամ*	0	1,000 դրամ*
	USD	-			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-
1.18 Օրական կանխիկացման գործարքների քանակը	AMD	10 անգամ	10 անգամ	10 անգամ	10 անգամ	10 անգամ
	USD	-			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-
1.19 Կանխիկացման գործարքների քանակի ավելացում օրական	AMD	1,000 դրամ	1,000 դրամ	1,000 դրամ	1,000 դրամ	1,000 դրամ
	USD	-			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-
1.20 Մեկ օրվա ընթացքում թույլատրվող կանխիկացման ընդհանուր գործարքների առավելագույն գումարը	AMD	1,500,000	1,500,000	1,500,000	300,000	400,000
	USD	3,000	3,000	3,000	-	-
	EUR	-	3,000	3,000	-	-
	RUR	-	120,000	120,000	-	-
1.21 Կանխիկացման կամ ընդհանուր գործարքների սահմանաչափի ավելացում օրական	AMD	1,000 դրամ	1,000 դրամ	1,000 դրամ	1,000 դրամ	-
	USD	-			-	-
	EUR	-			-	-
	RUR	-			-	-

1.22 Կանխիկացման կամ ընդհանուր գործարքների քանակի սահմանաչափի ավելացում քարտի գործողության ամբողջ ժամկետի համար	AMD	5,000 դրամ	5,000 դրամ	5,000 դրամ	5,000 դրամ	5,000 դրամ
	USD				-	-
	EUR				-	-
	RUR				-	-
1.23 Նույն հաճախորդի «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում գործող այլ հաշվին փոխանցում	AMD	0%	0%	0%	0%	-
	USD				-	-
	EUR				-	-
	RUR				-	-
1.24 քարտից-քարտ փոխանցումներ Բանկի քարտերին <sup>12</sup>	AMD	0.30%	0.30%	0.30%	0.30%	-
	USD				-	-
	EUR				-	-
	RUR				-	-
1.25 քարտից-քարտ փոխանցումներ «Արմենիան Քարդ» համակարգի անդամ բանկերի քարտերին <sup>12</sup>	AMD	0.50%	0.50%	0.50%	0.50%	-
	USD				0.50%	-
	EUR				-	-
	RUR				-	-
1.26 Քարտային հաշվից ՀՀ այլ բանկերի հաճախորդների օգտին փոխանցումներ (*AEB Mobile հավելվածով՝ անվճար)	AMD	500 դրամ*	500 դրամ*	500 դրամ*	500 դրամ*	-
	USD	կիրառվում է Հաշիվների բացման, սպասարկման և այլ ծառայությունների Տեղեկատվական Ամփոփագրի III-բաժնի 3 կետով նախատեսված սակագինը				-
	EUR					-
	RUR					-
1.27 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ այլ հաճախորդների օգտին փոխանցումներ (*AEB Mobile հավելվածով՝ անվճար բոլոր ArCa տեսակի և արժույթի քարտերի համար)	AMD	500 դրամ*	500 դրամ*	500 դրամ*	500 դրամ*	-
	USD				-	-
	EUR				-	-
	RUR				-	-
1.28 SMS հաղորդագրության ուղարկում <sup>13</sup>	AMD	20 դրամ	20 դրամ	20 դրամ	20 դրամ	20 դրամ
	USD				-	-
	EUR				-	-
	RUR				-	-
1.29 Քարտերի շտապ տրամադրում (վերաթողարկում) <sup>14</sup>	AMD	5,000 դրամ	5,000 դրամ	5,000 դրամ	5,000 դրամ	-
	USD				-	-
	EUR				-	-
	RUR				-	-
1.30 Բանկումատներով կատարված գործարքների բողոքարկման հայտ(ՀԷԲ քարտատերերի համար) <sup>15</sup>	AMD	5,000 դրամ	5,000 դրամ	5,000 դրամ	5,000 դրամ	5,000 դրամ
	USD				-	-
	EUR				-	-
	RUR				-	-
1.31 ArCa ուսումնասիրող անդամ բանկերի սպասարկման կետերում էլեկտրոնային պետական անկանխիկ վճարումների, ներառյալ՝ ՂԱՀԿ ծառայության աճուրդներով վաճառվող ապրանքների հետևի վճարման կատարում	AMD	200 դրամ	200 դրամ	200 դրամ	200 դրամ	-
	USD				-	-
	EUR				-	-
	RUR				-	-
